

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Զարկային և մաքսային օրենսդրության նորություններ 2

1.1 Օրենքներ -----	2
1.2 ՀՀ կառավարության որոշումներ -----	3
1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ -----	8

2. Զարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ 12

2.1 Ծրագրեր և կատարողականություն -----	12
2.2 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների -----	14
2.3 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում -----	14
2.4 Հետադարձ կապ, մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն -----	15
2.5 Զարկային և մաքսային թվերի համառոտագիր -----	16

1. ԶԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 | Օրենքներ

Փաստաթուղթ	«Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	23 փետրվարի 2010թ. ՀՕ-25-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 12(746), 24.03.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող երեսուներորդ օրվանից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ որպես համախառն եկամտից նվազեցվող եկամուտ են սահմանվում նաև **գործատուների կողմից իրենց վարձու աշխատողների առողջության ապահովագրության համար**

կատարված ապահովագրավճարները՝ յուրաքանչյուր վարձու աշխատողի համար եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա հաշվով մինչև տասը հազար դրամի չափով:

Փաստաթուղթ	«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	25 փետրվարի 2010թ. ՀՕ-27-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 12(746), 24.03.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Համառոտ նկարագիր

Կատարված լրացմամբ «Շահութահարկի մասին» ՀՀ 1997թ. սեպտեմբերի 30-ի ՀՕ-155 օրենքի 47.1-րդ հոդվածի 4-րդ կետում սահմանվում է, որ ՀՀ կառավարությունը կարող է նվազագույն շահութահարկի հաշվարկման բազայի այլ նվազեցումներ

սահմանել նաև **թանկարժեք քարերի իրացման, ոսկերչական իրերի արտադրության և իրացման, թանկարժեք մետաղների արտադրության և (կամ) իրացման** ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար:



Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	25 փետրվարի 2010թ, ՀՕ-28-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 12(746), 24.03.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Համառոտ նկարագիր

Կատարված լրացմամբ սահմանվում է, որ ԱԱՀ-ից ազատվում է նաև թանկարժեք մետաղների իրացումը:

Փաստաթուղթ	«Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	25 փետրվարի 2010թ, ՀՕ-29-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական և տեղեկագիր № 13(747), 31.03.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Համառոտ նկարագիր

Կատարված լրացմամբ սահմանվում է, որ գրավոր, բանավոր կամ էլեկտրոնային հարցադրումներին հարկային մարմնի սահմանած կարգով տրվում է համապատասխան պարզաբանում:

Փաստաթուղթ	«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	25 փետրվարի 2010թ, ՀՕ-30-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 13(747), 31.03.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Համառոտ նկարագիր

Կատարված լրացմամբ սահմանվում է, որ հարկ վճարողն իրավունք ունի սահմանված կարգով դիմել հարկային մարմնին՝ պարզաբանում ստանալու համար:

1.2 | ՀՀ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«Հարկային մարմնի ներկայացուցիչների և հարկ վճարողների ընտրության, հարկային մարմնի ներկայացուցիչների նշանակման և ներկայացուցիչների աշխատանքների կազմակերպման հարցերը կանոնակարգելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	18 փետրվարի 2010թ, N 187-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 12(746), 24.03.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվում է հարկային մարմնի ներկայացուցիչ նշանակելու համար հարկ վճարողների և հարկային մարմնի ներկայացուցիչների ընտրության ու նշանակման, վերջիններիս աշխատանքների կազմակերպման կարգերը. մասնավորապես՝ սահմանվում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը՝

- հարկային մարմնի տեղեկատվական համակարգում առկա տվյալներին համապատասխան դուրս է բերում օրենքով ներկայացուցիչ նշանակելու համար սահմանված հիմքերը բավարարող հարկ վճարողների նախնական ցանկը, որում ներառված հարկ վճարողների մոտ ներկայացուցիչների նշանակման նպատակահարմարությունը պարզելու, ինչպես նաև ընթացիկ հսկողության համար ներկայացուցիչների անհրաժեշտ քանակը որոշելու նպատակով յուրաքանչյուր հարկ վճարողի մասով իրականացնում է վերլուծություն՝ հաշվի առնելով 1) ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգին համապատասխան՝ միջին կամ բարձր ռիսկայնության գոտիներում հարկ վճարողի գտնվելու հանգամանքը, 2) հարկ վճարողի հիմնական գործունեության առանձնահատկությունները,
- վերլուծությունների արդյունքում հարկ վճարողների համար կազմում է ներկայացուցիչ նշանակելու նպատակահարմարության և ներկայացուցիչների անհրաժեշտ թվի վերաբերյալ եզրակացություն, որի հիման վրա կազմում և ՀՀ կառավարության

հաստատմանն է ներկայացնում ներկայացուցիչ նշանակելու ենթակա, օրենքով սահմանված հիմքերը բավարարող հարկ վճարողների ցանկը՝ հարկ վճարողների ցանկում ընդգրկվելու համապատասխան հիմնավորումներով:

ՀՀ կառավարության կողմից հաստատված հարկ վճարողների և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից հաստատված ներկայացուցիչների թեկնածուների ցանկերին համապատասխան՝ ներկայացուցիչները նշանակվում են հարկային մարմնի ղեկավարի հրապարակած գրավոր հրամանով: Հարկ վճարողի մոտ հսկողության անցկացման ընդհանուր ժամկետը չի կարող գերազանցել 183 օրացուցային օրը՝ մեկ օրացուցային տարվա համար կամ 250 աշխատանքային օրը՝ երկու օրացուցային տարիների համար:

Հարկ վճարողի մոտ հսկողության շրջանակներում ներկայացուցիչները՝

- ընտրանքային կարգով իրականացնում են առաքվող, բացթողնվող, տրամադրվող, տեղափոխվող կամ վաճառվող արտադրանքի և ապրանքների (այսուհետ՝ առաքվող արտադրանք և վաճառվող ապրանք), մատուցվող ծառայությունների փաստացի ծավալների ու գների հաշվառում և ուսումնասիրություն, այդ թվում՝ ըստ ապրանքների անվանումների, տեսականու, ծառայությունների տեսակների: Ներկայացուցիչները հարկ վճարողի տարածքներում իրավունք



ունեն բացառապես դիտելու պատրաստի արտադրանքի առաքման, տրամադրման, տեղափոխման կամ վաճառքի գործընթացը՝ այդ տարածքներ մուտք գործելով հարկ վճարողի պաշտոնատար անձի անմիջական մասնակցությամբ,



- իրականացնում են առաքվող արտադրանքի և վաճառվող ապրանքների, մատուցվող ծառայությունների՝ հարկային օրենսդրությամբ սահմանված փաստաթղթավորման, հաշվառման և գրանցման ընթացակարգերի ուսումնասիրություններ: Արտադրանքի առաքման, ապրանքի վաճառքի և ծառայության մատուցման գործարքների փաստաթղթավորման և հաշվառման կարգի նկատմամբ օրենքով սահմանված պահանջների կատարման ապահովման նպատակով ընտրանքային կարգով կոնկրետ գործարքի մասով հարկ վճարողից պահանջում են կատարել առաքվող արտադրանքի և (կամ) վաճառվող ապրանքների գույքագրումներ, այդ թվում՝ ըստ ապրանքների անվանումների (անվանացանկի), ապրանքների տեսականու,

- ծանոթանալու նպատակով հարկ վճարողից պահանջում են ներկայացնել բացառապես հսկողությանն անմիջապես առնչվող փաստաթղթեր, տվյալներ և տեղեկություններ առաքվող արտադրանքի և վաճառվող ապրանքների, մատուցվող ծառայությունների փաստացի ծավալների ու գների, դրանց իրացումից ստացվող հասույթի վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում՝ ըստ ապ-

րանքների անվանումների, տեսականու, ծառայությունների տեսակների,

- իրականացնում են հարկ վճարողի կողմից հարկային օրենսդրության և դրան համապատասխան ընդունված իրավական ակտերի դրույթների խախտումների կանխարգելիչ միջոցառումներ, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, տրամադրում են տեղեկատվություն հարկային օրենսդրության և դրան համապատասխան ընդունված իրավական ակտերի դրույթների, դրանց խախտման համար սահմանված պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ:

Հարկային ներկայացուցիչները հարկ վճարողի մոտ իրականացվող ընթացիկ հսկողության ընթացքում հարկային մարմնի սահմանած կարգով վերադաս հարկային մարմնի հարկային ներկայացուցիչների աշխատանքները համակարգող համապատասխան կառուցվածքային ստորաբաժանում են ներկայացնում հարկային հսկողության արդյունքների վերաբերյալ հաշվետվություն:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին գույք հանձնելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	11 մարտի 2010թ, N 349-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 15 (749), 14.04.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Համառոտ նկարագիր

Որոշմամբ նախատեսվում է Վանաձոր քաղաքի «Հովհաննես Թումանյանի անվան թիվ 3 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված՝ ՀՀ լոռու մարզի Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի N35 հասցեում գտնվող շենքի առաջին հարկից և կցակառույցից 21.2 մլն

դրամ հաշվեկշռային արժեքով և 411 քառ. մետր ընդհանուր մակերեսով տարածքն ամրացնել «ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին՝ Վանաձորում հարկ վճարողների սպասարկման տարածքային կենտրոն ստեղծելու նպատակով:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության և Ասիական զարգացման բանկի միջև կնքված մի շարք պայմանագրերով նախատեսված՝ հարկային, մաքսային և այլ պարտադիր վճարների գծով արտոնությունների կիրառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	25 մարտի 2010թ, N312-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N° 14 (748), 07.04.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվում է ՀՀ կառավարության և Ասիական զարգացման բանկի միջև կնքված մի շարք պայմանագրերով նախատեսված՝ հարկային, մաքսային և այլ պարտադիր վճարների գծով արտոնությունների կիրառման կարգը, որը կիրառվում է ՀՀ և Ասիական զարգացման բանկի միջև կնքված հետևյալ համաձայնագրերի նկատմամբ՝

1. Ասիական զարգացման բանկի հիմնադիր համաձայնագիր,
2. ՀՀ կառավարության և Ասիական զարգացման բանկի միջև տեխնիկական աջակցության շրջանակային համաձայնագիր,
3. մասնավոր հատվածի գործողությունների երաշխավորագիր-նամակ,
4. ՀՀ կառավարության և Ասիական զարգացման բանկի միջև Ասիական զարգացման բանկի մշտական առաքելության մասին համաձայնագիր:

Համաձայնագրերով նախատեսված հարկային, մաքսային և այլ պարտադիր վճարների գծով արտոնությունները կիրառվում են այդ համաձայնագրերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ուժի մեջ մտնելու պահից:



Նշված կարգը չի սահմանափակում ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկային, մաքսային և այլ պարտադիր վճարների գծով նախատեսված այլ արտոնություններ:

Համաձայնագրերով նախատեսված ծրագրերի շրջանակներում ՀՀ տարածքում գործող իրավաբանական և ֆիզիկական անձինք՝ ՀՀ ապրանքների ներմուծման, ՀՀ-ում ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման դեպքում կազմակերպության (Ասիական զարգացման բանկ և ՀՀ-ում Ասիական զարգացման բանկի մշտական

առաքելություն) հետ կնքում են համապատասխան պայմանագրեր:

Համաձայնագրի շրջանակներում կիրառվող արտոնություններն են՝

1. | **ավելացված արժեքի հարկ,**
2. | **շահութահարկ,**
3. | **եկամտահարկ,**
4. | **պարտադիր սոցիալական պահովության վճարներ,**
5. | **մաքսատուրք:**



Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N1330-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	25 մարտի 2010թ, N 311-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 14 (748), 07.04.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Համառոտ նկարագիր

Կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ՝

- հարկային վարչարարությանն օժանդակության նպատակով հսկիչ-դրամարկղային մեքենաների (այսուհետ՝ ՀԴՄ) կտրոնների վիճակահանությունն անցկացվում է, եթե ներկա է հանձնաժողովի անդամ պետական պաշտոնատար անձանց 1/2-ը (նախկին 3/4-ի փոխարեն),



- բոնուսներ ստանալու նպատակով ներկայացվող խմբաքանակներում չներառվող գործունեության տեսակների համար կիրառվող ՀԴՄ-ների կտրոնների ցանկից հանվում են լուսանկարչական լաբորատորիաների գործունեության համար կիրառվող ՀԴՄ կտրոնները:

13-րդ կետը վերախմբագրվել է, ըստ որի՝ «Վիճակահանության համար նախատեսված բազային պարզևավճարների հիմնադրամն օգտագործվում է բազային պարզևավճարների, բոնուսների հաշվարկման և վճարման (այդ թվում՝ բոնուսներ տրամադրող մարմնին կանխավճարի տրամադրման), ինչպես նաև վճարահաշվարկային ծառայությունների դիմաց վճարման համար»:

14-րդ կետում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ ֆիզիկական անձինք պարզևավճար ստանալու նպատակով սահմանված կարգով և ժամկետներում կարող

են դիմել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի հետ պարզևավճար տրամադրելու նպատակով պայմանագիր կնքած՝ ՀՀ տարածքում գործող բանկ կամ վճարահաշվարկային ծառայություններ մատուցող այլ կազմակերպություն:

18.1 կետում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի և բոնուսների տրամադրող մարմնի միջև պայմանագրերի բացակայության դեպքում ՀՀ տարածքում ապրանքներ և ծառայություններ անմիջականորեն ձեռքբերող (ստացող) ֆիզիկական անձինք վիճակահանությունների արդյունքում չչափած կտրոնները բոնուսների հաշվարկման նպատակով կարող են սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային (տարածքային) տեսչություն:

րերի բացակայության դեպքում ՀՀ տարածքում ապրանքներ և ծառայություններ անմիջականորեն ձեռքբերող (ստացող) ֆիզիկական անձինք վիճակահանությունների արդյունքում չչափած կտրոնները բոնուսների հաշվարկման նպատակով կարող են սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային (տարածքային) տեսչություն:

1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	«Ակցիզային պահեստ» ռեժիմի կիրառումն ապահովող կարգերը, մատյանների և փաստաթղթերի ձևերը հաստատելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	03 մարտի 2010թ, N411-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 10(362), 15.04.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրվանից

Համառոտ նկարագիր

Հրամանով հաստատվում են.

1. Ակցիզային պահեստում ընդգրկվող տարածքների հարկային մարմնի հետ համաձայնեցման կարգը,
2. «Ակցիզային պահեստ» ռեժիմի շրջանակներում ապրանքների քանակությունների և դրանց շարժի գրանցման մատյանի վարման կարգը,
3. Ակցիզային պահեստի աշխատանքային ռեժիմի վերաբերյալ հարկային ծառայողին տեղեկացման կարգը,
4. Ակցիզային պահեստից ապրանքների տրամադրման կամ տեղափոխման ժամանակ օգտագործվող փաստաթղթերի ձևերի



տրամադրման և դրանց օգտագործման վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունների ներկայացման կարգը,

5. Ակցիզային դրոշմանիշերի ստացված քանակությունների և շարժի գրանցման մատյանի ձևը:

Փաստաթուղթ	«Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և ներդրումային ընկերությունների կողմից հարկային մարմիններ ներկայացվող հաշվապահական հաշվեկշռի ու ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունների ձևերի վերաբերյալ» ՀՀ ԿԱ պետական եկամուտների պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	10 ապրիլի 2010թ, N5
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 10 (362), 15.04.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից

Համառոտ նկարագիր

Պարզաբանվում է, որ բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները և ներդրումային ընկերությունները իրենց հաշվառման վայրի հարկային տեսչության մարմին յուրաքանչյուր տարվա արդյունքներով (մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը) շահութահարկի հաշվարկների հետ

միասին ներկայացնում են նաև ֆինանսական հաշվետվություններ (հաշվապահական հաշվեկշիռ, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն)՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումներով և ՀՀ ֆինանսների նախարարի հրամաններով հաստատված՝ հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների ձևերով:

Փաստաթուղթ	«Հսկիչ գնումների արդյունքում վաճառված ապրանքների հետընդունման ակտի ձևը հաստատելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	09 մարտի 2010թ, N421-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 8 (360), 01.04.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից

Համառոտ նկարագիր

Հրամանով հաստատվում է հսկիչ գնումների արդյունքում վաճառված ապրանքների հետընդունման ակտի ձևը:

Փաստաթուղթ	«Հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ արձանագրության ձևը հաստատելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	09 մարտի 2010թ, N422-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 8 (360), 01.04.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից

Համառոտ նկարագիր

Հրամանով հաստատվում է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ արձանագրության ձևը:

Փաստաթուղթ	«Չափագրման արդյունքների վերաբերյալ արձանագրության ձևը հաստատելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	09 մարտի 2010թ, N423-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 8 (360), 01.04.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից

Համառոտ նկարագիր

Հրամանով հաստատվում է չափագրման արդյունքների վերաբերյալ արձանագրության ձևը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետությունում առանձնացված ատորաբաժանում (մասնաճյուղ, ներկայացուցչություն) ունեցող ոչ ռեզիդենտների կողմից անուղղակի եղանակներով հարկվող շահույթի հաշվարկման ժամանակ հարկային մարմին ներկայացվող տարեկան եկամուտների մասին հայտարարագրի լրացման վերաբերյալ» ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	11 մարտի 2010թ, N3
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 8 (360), 01.04.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից

Համառոտ նկարագիր

Պարզաբանվում է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված դեպքերում ոչ ռեզիդենտի կողմից տարեկան եկամուտների մասին հայտարարագրում լրացվում են միայն 0301 և 0302, 0300, 0402, 0400 և

0500 տողերը, ընդ որում՝ 0301 և 0302 տողերի լրացման ժամանակ հաշվի չեն առնվում տարեկան եկամուտների մասին հայտարարագրի ձևում և լրացման ցուցումներում այդ տողերին վերաբերող բանաձևերը:

Փաստաթուղթ	«Շահութահարկով հարկման նպատակով արտարժույթով արժութային գործարքները հաշվառելու վերաբերյալ» ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	22 մարտի 2010թ, N4
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 8 (360), 01.04.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից

Համառոտ նկարագիր

Պարզաբանվում է, որ՝

1. Արտարժույթով արժութային գործարքների շրջանակներում՝

1) ձեռքբերված արտարժույթի միավորի սկզբնական (ձեռքբերման) արժեքը որոշվում է արտարժույթի ձեռքբերման պահին ՀՀ արտարժութային շուկաներում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի տվյալ օրվա միջին փոխարժեքով (այսուհետ՝ Միջին փոխարժեք):

2) դեբիտորական պարտքերի սկզբնական (ձեռքբերման) արժեքը որոշվում է ռեզիդենտի հանդեպ այլ անձանց (դեբիտորների) կողմից վճարման (այլ ձևով հատուցման) ենթակա պարտքի առաջացման, իսկ դեբիտորական պարտքերի մարումը (այդ թվում՝ մասնակի) կամ դուրսգրումը (այդ թվում՝



մասնակի) կատարվում է մարման (այդ թվում՝ մասնակի) կամ դուրսգրման (այդ թվում՝ մասնակի) պահին Միջին փոխարժեքից ելնելով:



3) այլ ակտիվների (հիմնական միջոցներ, արագամաշ առարկաներ, հումք և նյութեր, ապրանքներ, ոչ նյութական ակտիվներ, արժեթղթեր և այլն) սկզբնական (ձեռքբերման) արժեքը որոշվում է ակտիվի նկատմամբ սեփականության իրավունքի ռեզիդենտին անցնելու (այդ թվում՝ մաս-մաս) պահին միջին փոխարժեքից ելնելով, իսկ արտարժույթով արտահայտված այլ ակտիվների (այդ թվում՝ արժեթղթերի) մարումը (այդ թվում՝ մասնակի) կամ դուրսգրումը (այդ թվում՝ մասնակի) կատարվում է մարման (այդ թվում՝ մասնակի) կամ դուրսգրման (այդ թվում՝ մասնակի) պահին Միջին փոխարժեքից ելնելով,

4) կրեդիտորական պարտքերի սկզբնական (ձեռքբերման) արժեքը որոշվում է ռեզիդենտի կողմից այլ անձանց (կրեդիտորների) հանդեպ վճարման (այլ ձևով հատուցման) ենթակա պարտքի առաջացման, իսկ կրեդիտորական պարտքերի մարումը (այդ թվում՝ մասնակի) կամ դուրս գրումը կատարվում է մարման (այդ թվում՝ մասնակի) կամ դուրսգրման պահին Միջին փոխարժեքից ելնելով:

2.) Արտարժույթը (կանխիկ, անկանխիկ) և արտարժույթով արտահայտված այլ ակտիվները (այդ թվում՝ արժեթղթեր, տրված վարկեր, տրված փոխառություններ և այլ դեբիտորական պարտքեր), արտարժույթով արտահայտված պարտավորությունները (այդ թվում՝ ստացված վարկեր, ստացված փոխառություններ, ստացված կանխավ-

ճարներ և այլ կրեդիտորական պարտքեր) ենթակա են վերագնահատման արտարժույթի, արտարժույթով արտահայտված այլ ակտիվների և պարտավորությունների մացորդների փոփոխման, ինչպես նաև յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջին օրվա դրությամբ:

3.) Արտարժույթի փոխանակման գործարքներ իրականացնելիս գործարքի կողմերի միջև Միջին փոխարժեքից տարբերվող այլ փոխարժեք կիրառելու դեպքում Միջին փոխարժեքից և փաստացի կիրառված փոխարժեքից ելնելով հաշվարկված արտարժույթի արժեքների միջև առաջացած տարբերությունները չեն հանդիսանում Վերագնահատման արդյունքներ՝

1) արտարժույթ ձեռքբերողի մոտ դրական տարբերությունները ներառվում են համախառն եկամտի, իսկ բացասական տարբերությունները՝ համախառն եկամտից նվազեցվող ծախսերի մեջ,

2) արտարժույթ վաճառողի մոտ բացասական տարբերությունները ներառվում են համախառն եկամտի, իսկ դրական տարբերությունները՝ համախառն եկամտից նվազեցվող ծախսերի մեջ:

4.) Օրենքի 57-րդ և 64-րդ հոդվածներին համապատասխան եկամտի վճարման աղբյուրի մոտ ոչ ռեզիդենտի շահութահարկի պահումը (գանձումը) իրականացնում է հարկային գործակալը, որը հաշվարկվում է՝ ոչ ռեզիդենտին եկամուտների փաստացի

վճարման պահին Միջին փոխարժեքից ելնելով: Այդ դեպքերում, մասնավորապես՝ ոչ ռեզիդենտի կողմից դուրսգրված սկզբնական (հաշվառման) փաստաթղթերի և հարկային գործակալի կողմից ոչ ռեզիդենտին եկամուտների վճարման ամսաթվերի Միջին փոխարժեքներով հաշվարկված ոչ ռեզիդենտի շահութահարկի գումարների միջև առաջացած տարբերությունը հանդիսանում է Վերագնահատման արդյունք:

Օրենքի 43-րդ հոդվածի «գ» ենթակետի համաձայն տոկոսների տեսքով կամ գույքը վարձակալության տալու դիմաց եկամուտներ ստանալու դեպքում եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռքբերված՝ պարտքի կամ վարձակալական պայմանագրի ժամկետը լրանալու պահից: Եթե պարտ-

քի կամ վարձակալության պայմանագրի ժամկետը ներառում է մի քանի հաշվետու ժամանակաշրջան, ապա հաշվետու ժամանակաշրջանում եկամուտը բաշխվում է դրա հաշվեգրմանը համապատասխան: Այդ դեպքերում կրտաժողովարժության գործարքներին վերագրվող վարկի (փոխառության) կամ վարձակալության դիմաց տոկոսների կամ վարձակալության դիմաց վարձավճարների ձևով եկամուտների հաշվարկում կատարվում է տոկոսների կամ վարձավճարների վճարման ժամկետի լրանալու օրվա (օրերին) կամ տարվա վերջին օրվա Միջին փոխարժեքից ելնելով (բացառությամբ՝ երբ օրենսդրությամբ սահմանված է արտարժույթով տրված վարկերի կամ փոխառությունների գծով ընթացիկ տոկոսների հաշվարկման այլ կարգ):


2. ՀԱՐԿԱՅԻՆ և ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՎԱԳՆԵՐ

2.1 | Ծրագրեր և կատարողականություն

2.1.1 | Ծրագրեր և կատարողականություն /հարկային ծառայության մասով/

1. | **ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում կատարողականի վրա հիմնված հաշվետվական համակարգի ներդրում**

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը տարեսկզբից անցում է կատարել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգին: Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի կարևոր տարրերից է հանդիսանում



ևսև կատարողականի գնահատման մեխանիզմների առկայությունը և կիրառումը այդ համակարգի միջոցով:

ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատանքային ծրագրերը էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգ մուտքագրվելուց և հաստատվելուց հետո կդառնան գործող, և ս/թ մայիսի 20-ից հարկային /մաքսային/ ծառայողների աշխատանքի կատարողականի գնահատումը կկատարվի «Mulberry» համակարգի միջոցով:

2. | **Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ**

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը ակտիվորեն շարունակում է համագործակցությունը միջազգային դոնոր կազմակերպությունների հետ:

Ս/թ ապրիլից վերսկսվել են Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) հարկային մշտական ներկայացուցչի խորհրդատվական աշ-

խատանքները ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում: Այս այցի ընթացքում ԱՄՅ ներկայացուցչի կողմից տրամադրվող օժանդակության շրջանակներն են.

- հարկային հսկողության արդյունավետ մեթոդներ,
- ԱՄՅ-ի հաշվետվությունների էլեկտրոնային ներկայացում՝ էլեկտրոնային հաշիվներ,
- բողոքարկումների գործընթացի բարելավում,
- մարդկային ռեսուրսների կառավարում,
- ռազմավարական պլանավորման գործընթացի բարելավում,
- ներքին աուդիտի պլանավորում:

Վերոնշյալ և մի շարք այլ հարցերի շուրջ միջազգային փորձագետի կողմից օժանդակություն ստանալու նպատակով կազմվել է ժամանակացույց, որի հիման վրա կազմակերպվում են քննարկումներ ՀՀ ԿԱ ՊԵԿ տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցների հետ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը ակտիվորեն շարունակում է համագործակցությունը **ԱՄՆ միջազգային գաղթագման գործակալության (ԱՄՆ ՄՁԳ)** Հարկային վարչարարության բարեփոխումներն օժանդակող տեխնիկական աջակցության (ՀՎԲՕՏԱ) ծրագրի հետ: Ծրագրի կողմից



տրամադրվող օժանդակության շրջանակներում շարունակվել է ռիսկային չափանիշների վրա հիմնված ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի ներդրմանն ուղղված միջոցառումների իրագործումը: Միաժամանակ, շարունակվել է հարկ վճարողների սպասարկման բարելավմանն ուղղված օժանդակությունը ծրագրի մասնագետների կողմից: Մասնավորապես կազմակերպվել են ուսումնական դասընթացներ, մի շարք քննարկումներ հարկ վճարողների սպասարկման կենտրոնների կողմից մատուցվող ծառայությունների որակի և շրջանակի ընդլայնման ուղղությամբ: ԱՄՆ ՄՁԳ կողմից կազմակերպվել են նաև վերլուծական գործառնություններ իրականացնող հարկային ծառայողների վերապատրաստման դասընթացներ:

2.1.2 | Ծրագրեր և կատարողականություն /մաքսային ծառայության մասով/

Սույն թվականի ապրիլի 16-ից 17-ը Ադվերանում Եվրամիության խորհրդատվական խմբի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի, ինչպես նաև CONFIAD մաքսային բրոքերների Եվրոպական միության և Եվրոպական հանձնաժողովի հարկային և մաքսային հարցերով գլխավոր տնօրինության փորձագետների կողմից կազմակերպվել է երկօրյա սեմինար, որի նպատակն էր մասնակիցներին ծանոթացնել մաքսային միջնորդական գործունեության Եվրոպական միության երկրներում գործող ստանդարտ-



ներին և գործելակերպին և ՀՀ-ում այդ ոլորտի կատարելագործմանը: Սեմինարին մասնակցել են ՀՀ-ում մաքսային միջնորդական գործունեություն իրականացնող անձինք, ՀՀ ԿԱ ՊԵԿ, ՀՀ ֆինանսների նախարարության, ինչպես նաև մասնավոր հատվածի ներկայացուցիչներ:

2010թ. ապրիլի 6-ից 16-ը ՀՀ ԿԱ ՊԵԿ պատվիրակությունը մասնակցել է ք. Սկոպյեում (Մակեդոնիա) Համաշխարհային մաքսային կազմակերպության կողմից Կոլումբոս ծրագրի շրջանակներում կազմակերպված «Մաքսային համակարգի կառավարում և զարգացումներ» խորագրով աշխատաժողովի աշխատանքներին:



2.2 | Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

20.03.2010թ-ից մինչև 20.04.2010թ-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից լսվել են թվով 4 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որի արդյունքում թվով 7 հարկային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից 20.03.2010թ-ից մինչև 20.04.2010թ-ն ընկած ժամանակահատվածում լսվել է թվով 16 բողոք, որից.

- բավարարվել է 2 բողոք,
- մասնակի բավարարվել է 1 բողոք,
- մերժվել է 12 բողոք,
- կարճվել է 1 բողոք:

2.3 | Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում

2.3.1 | Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում /հարկային ծառայության մասով/



2010թ. ապրիլի 16-ին կայացել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության թափուր պաշտոնների համալրման նպատակով հերթական մրցույթը, որին մասնակցելու դիմում էին ներկայացրել 208 քաղաքացիներ: Մրցույթի արդյունքում համալրվել է հարկային ծառայության 26 թափուր պաշտոն:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության մրցության և ատեստավորման հանձնաժողովի 09.04.2010թ. որոշմամբ 2010թ. մայիսի 11-ին անցկացվելու է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային (տարածքային) տեսչությունների, խոշոր

հարկ վճարողների հարկային տեսչության և օպերատիվ-հետախուզության վարչության ատեստավորման ենթակա, սակայն ժամա-

նակավոր անաշխատունակության պատճառով ատեստավորումից բացակայած հարկային ծառայողների ատեստացիան:

2.4 | **Յետադարձ կապ, մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն**

2.4.1 | **Յետադարձ կապ, մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն /հարկային ծառայության մասով/**

2010թ. ապրիլ ամսին ՀՀ ԿԱ ՊԵԿ «Թեժ գծով» ստացվել է 114 բողոք և առաջարկություն:

Բողոքների հիմնական մասը վերաբերել է պարզաբանության տրամադրման նոր կարգին, պայմաններին, ժամկետներին, ապրիլի վիճակահանության շահող թվերին և շահումների տրամադրման կարգին, ինչպես նաև վիճակահանությանն առնչվող բազմաթիվ այլ հարցերի:

Բողոքների մի մասն էլ առնչվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման փաստերին:

Առաջարկությունները հիմնականում վերաբերել են պարզաբանության տրամադրման նոր կարգին և պայմաններին: Հարցերի մի ստվար խումբ էլ վերաբերել է հայտարարագրերի ներկայացման պայմաններին և հարկային օրենսդրությանը: Մասնագիտա-



կան պարզաբանումներ ստանալու համար քաղաքացիներին տրամադրվել են հարկային (տարածքային) տեսչությունների համապատասխան բաժինների հեռախոսահամարները:

2.4.2 | **Յետադարձ կապ, մամուլի արձագանքներ և «թեժ գծի» վերլուծություն /մաքսային ծառայության մասով/**

Ս.թ. մարտի 20-ից ապրիլի 20-ը ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային ծառայության «Թեժ գծով» ստացվել է շուրջ 300 զանգ: Չանգահարողների գերակշիռ մասը խնդրել է տրամադրել մաքսային մարմինների գործունեության և մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հետ կապված տեղեկատվություն կամ խորհրդատվության կարիք է ունեցել: Նմանատիպ խնդրանքները բավարարվել են անմիջապես հեռախոսով: Որոշ հեռախոսազանգեր առնչվել են արտերկրից ուղարկված ծանրոցների մաքսազերծ-

ման հետ կապված խնդիրներին: Նշված ժամանակահատվածում արձանագրվել է 2 բողոք, որոնք հիմնականում վերաբերել են մաքսային ձևակերպումների և ավտոմեքենաների գնահատման հետ կապված հարցերին: Կախված անհրաժեշտությունից՝ քաղաքացուն կամ զանգահարել և պարզաբանում են տվել խնդրի առնչությամբ, կամ հրավիրել են ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային ծառայության համապատասխան ստորաբաժանում՝ հարցն ավելի մանրամասն ուսումնասիրելու և տեղում անհրա-

Ժեշտ պարզաբանումներ տալու նպատակով: Նշված ժամանակահատվածում «Թեժ գծով» օրական արձանագրվել է միջինը

10-15 զանգ: Մարտի 20-ից մինչև ապրիլի 20-ն արձանագրված բոլոր բողոքներին արձագանքվել է:

2.5 | Հարկային և մաքսային թվերի համառոտագիր

2.5.1 | Հարկային վիճակագրության մի քանի թվեր

1	Ցուցանիշ	2010 թվական		
		Մարտ	Հունվար - մարտ	Աճը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-մարտ)%
2	3	4	5	
1	Հաշվառված՝ ՀՎՀՅ ստացած հարկ վճարողներ	1,474.0	4,111.0	95.3
2	Հարկային մարմնի կողմից պետությունը հավաքագրված եկամուտներ (մլն դրամ), այդ թվում՝	35,351.4	98,496.9	122.5
2.1	ԱԱՀ	7,076.9	22,876.6	135.2
2.2	Շահութահարկ	7,399.4	18,476.8	117.4
2.3	Ակցիզային հարկ	512.0	1,593.3	133.8
2.4	Եկամտահարկ	5,574.2	16,222.1	135.4
2.5	Պարտադիր սոցիալական ապահովության վճար	9,812.1	26,183.2	121.6
2.6	Այլ	4,976.9	13,145.0	100.6
3	Հարկային մարմնի կողմից կատարված ստուգումներ (հատ)	2,457.0	5,287.0	106.5
4	Հարկային ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարներ (մլն դրամ)	1,083.6	2,906.8	44.8

2.5.2 | Մաքսային վիճակագրության մի քանի թվեր

1	Ցուցանիշ	2009թ.		2010թ.		Աճը նախորդ տարվա նկատմամբ %	
		Հունվար-մարտ	մարտ	հունվար-մարտ	մարտ	հունվար-մարտ	մարտ
2	3	4	5	6	7	8	
1	Մաքսային մարմնի կողմից պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ (մլն դրամ)	47 440	16 437	54 472	20 987	114.8	127.7
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը (մլն դրամ), այդ թվում՝	264 140	105 885	397 312	181 831	150.4	171.7
2.1	Արտահանում (մլն դրամ)	43 249	17 295	77 322	30 247	178.8	174.9
2.2	Ներմուծում (մլն դրամ)	220 891	88 590	319 990	151 583	144.9	171.1
3	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվը (միավոր)	8 031	3 253	7 374	3 950	91.8	121.4